

«ՉԱԻԻՂ» տարեկան գինը 10 դրան, կէս տարւանը 6 դրան: Ըստանդին համարները 5 շահի:

Ըրտառահման տարեկան 8 ֆր. կամ 3 րուրդի կէս տարւանը 5 ֆր. կամ 2 րուրդի:

Արտառահմանից փոքր համար պիտի գին հետեւեալ հասցեով. *Черезъ Баку въ Эр-зели Россійской Императорской Миссіи въ Тегеранъ пер. Бекъ-Назаровъ.*

«ՇԱԻԻՂ» ԼՈՅՍ Է ՏԵՄԵՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ԵՍԲԱԹ ՕՐԵՐԸ

ՇԱԻԻՂ

«ՉԱԻԻՂ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով՝ իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի: Արտառահմանի յայտարարութիւնները բառին 1 կողմէ:

Նամակներէ, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. *Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)*

Ա Զ Գ Ա Յ Ի Ն Գ Ր Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն Ե Ի Բ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ծ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Պարսկահայ կնոջ ձայնը.— Ներքին Տեսչութիւն. Նամակ Խոյնի. Նամակ Ստամբուլի. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՄԵՆՈՒՄ. Օրինակելի գործչու-թիւն.— ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. «Չաիիղ» պատասխան-ներ.— Յայտարարութիւններ.— ԲԱՆՈՍԻՐԵՅՆ Պնանք այնտեղ:

ՊԱՐՏԱԿԱՆ ԿՆՈՋ ԶԱՅՆԸ

Երբորդ գէպքն է որ պատահում է և ցոյց տալիս թէ ինչպէս պարսկահայ-կիներ պաշտպան է հանդիսանում միմե-այն վատին, վնասակարին. երեք ուրիշ գէպքեր էլ, որոնք երեւցնում են թէ ինչպէս այդ միամիտ կնոջ քթից բը-նում անձնական կրքերով ղեկավարող խաւար ուղղութեան տէր անձեր, գործել են տալիս միմեայն անօգուտ և սխալ քայլեր:

Առաջին գէպքը Թէհրանի տէր Մաշ-տոց քահանայի գէպքն է: Այդ քահա-նան, ամբաստանած որպէս անբարոյա-կան, արբեցող և ալլն, ժողովրդի բո-

ղոքի համաձայն պաշտօնագրով է լի-նում. ապա Թէհրանի փերասիրտ կա-նայք հակառակ իրենց ամուսինների տը-ւած բողոքի. իրենց մէջ մի հանրա-գրութիւն են կազմում և խնդրում հո-գեւոր վարչութիւնից, որ իրենց տը-ւել Մաշտոցը, իրենց պահանջին կից չը կար քահանային արգարացնող ոչ մի փաստ: Քահանան ակնել և լանցաւոր էր. կանանց ձայնը թէև անուղղակի մերժ-ւեց, բայց այդ քահանան զեռ էլի մը-նում է. տիկնանց խաթըրը ինչպէս կա-րող է կոտորել հոգեւոր իշխանութիւնը, որոնց բարեպաշտութիւնով է միայն, որ ապրում է ինքը:

Երկրորդ գէպքն է Ռաշտի կանանց հանրագրութիւնը յօգուտ այդ քաղաքի ապիկար ուսուցչի և տգէտ վարժու-հու, որոնց մասին թէ մեր թերթի թրդ-թակիցը և թէ գլխաւոր աշխատակիցը անհամար ցաւալի լուրեր են հաղոր-դում: Եւ ահա այդ աֆերիստ ուսուցչին ու ու ուսուցչուհին, կարողանալով կոր-գել տառնեակ կանանց անունները, կազ-

մում են մի հանրագրութիւն, որում ի-րենք իրենց համարում են որպէս, արդար խելահաւիթ հաղորդածները ոչ-ճիշտ: Եւ որը առաւել է, խորհուրդ էլ են տա-լիս «Շաիիղին»: Հետաքրքիր էր իմանալ թէ քանի անգամ թէյով և ճաշով պա-տիւ են ստացել այդ կանայք, որ իրենց սնունդը դրել են մի անիրաւ-հալից պաշտպանող հանրագրութեան տակ:

Ո՞վ չը զիտէ, որ պարսկահայ զեռ ևս ոչխարային յտուկութեան տէր կնոջ ուղ-ղել այս—այն կողմը մի թէյով կամ մի ճաշով—ամենահառաքակ գործ է եղել աֆերիստների համար: Դեռ նոր էր, որ մի քանի հոստներ Դալիթեմում, կամե-նալով վնասել Լիւլիա թաղի «Հայու-հեաց ընկերութեան», աջդի համար կազ-մեցին Բերդաթաղում կանանց մի ուրիշ ընկերութիւն այնպիսի անգամներից, որ-ոնք «բոցակայ» բառը պատաւոր տի-տղիս համարելով, ժողովն են տալիս ու վրայ անում, որպէս զի իրենք էլ «բա-ցակայի» արժանի լինեն:

Դեռ շատ ժամանակ չէ անցել որ Թէհրանում, մի վարդապետ ընդունե-լու համար, կանայք էին որ ընկել էին զոնէ դուռ և հարկւաւոր թուամաններ ժողովել, մինչ հեռաւոր սովից ու թըշ-ւառութիւնից կոտորւող թիւրքահայ եղբոր ու քրոջ համար, այդ պարսկա-հայ կիներ զեռ մի քայլ էլ չարաւ: Բա-ցառութիւնները յարգելի են, բայց այն-քան սակաւ են, որ աննշան են մնա-ցել և չեն էլ լիշվում:

Դեռ հէնց այս օրերում է, որ ամեն բան կրքերի զոհող խմբի անգամները ուղեւոր խանգարել քիչ շատ կանոնա-ւոր մի գործ յօգուտ Թէհրանայ Դօվ-լաթա թաղի, գիմեցին իրանց կանանց օգնութեանը, որոնք զոնէ դուռն ըն-կած փող են հաւաքում, ազգային վար-չութեանը հակառակ պաշտպանել ուղե-լով, իրենց ամուսինների դժոխալին մը-տագրութիւնները, որպէս թէ ազգի հա-մար իրենք ցանկանում լինին իրենց թա-ղում օրերդաց դպրոց բանալ:

Ուրեմն, պարսկահայ կիներ չէ գոր-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳՆԱՆՔ ԱՅՆՏԵՂ....

(Պ Ա Տ Մ Ի Ա Ծ Ք)

Բ.

Ալիքները գալիս, ուսման պէս տրաքում էին խփուկով կարծր պատին: Հեռվում մի բանի փորրիկ առագաստաւոր նաւեր բուռն կերպով օրորվում էին և կայմի ծայրով ջուրը համ-բուրում: Ալիքներից կազմող փրփրային կա-նանաւոր գծերը միմեանց հրում, միմեանց վրայ հեծնում, յետոյ փոքրին կըլանում կամ մեծից կլանվում ի մի ծուլվում՝ գալիս ծեծում էին պատը:

Այդ մռնչիւնի միջոցներում լսվում էին ծի-ծեռների ձայնը, և շողեռաւի ճնշումը շոգու նսոր սուլումը:

— Ցած չէ գնում, ասաց Մկոն կուլ տալով չոր հացի մի կտոր—բողազս չոր է անպա-տի պէս:

— Փռչին է արել. իմն էլ է այդպէս. կուզես ջուր բերն:

— Ո՛չ, նոսիր:

Հարունակեցին ուտել:

— Որքան չքեղ է ծովը, ծովը, խօսեց Մկոն ուղք ծովի հորիզոնին:

— Այո... բայց աղեկոծութիւն կայ:

— Այդ ոչինչ... շողեռաւը զրանից չի վախե-նալ:

Ակոն քիչ լուեց. յետոյ խոր ձայնով ասեց.

— Ինչ լաւ կը լինէր որ մեզ էլ տանէր.

Մկոն ծիծաղեց:

— Ո՛ւր տանէր, հարցրեց նա—Եւրոպոյ, Պօլիս:

— Տրապիզոնի մօտից է անցնելու:

— Կանգ չի առնել այնտեղ:

— Կը կանգնի, առաւօտեան ևս ղեկավարին հարցրի, թուրքերէն գիտէր:

— Է՛, լինու հարցրի, միտքը լինչ էր:

— Հինց այնպէս, ժպտեց տիւրքեմամբ Ա-կոն—ուրախացայ որ Տրապիզոն կանգ է առ-նելու:

Մկոն կտրեց մի շերտ հաց, յետոյ տիւրք-թեմամբ, բայց մեղմ ձայնով ասաց.

— Դեռ երեխայ ես, Ակո...

— Ինչ անեմ, արդարացաւ Ակոն—չէ որ Տրապիզոնից մօտ է մեր երկիրը... ինչ լաւ կը լինէր որ այդ շողեռաւ մեզ էլ տանէր:

— Լաւ կը լինէր, այո՛... շատ լաւ... բայց մեր պարտքերն ո՞վ կը տար և բացի զրանից, երթայինք երկիր լինչ պիտի անէինք:

— Է՛հ, վրայ, տուաւ յուզմամբ Ակոն—Աս-տուած է վկայ որ այստեղ աւելի մենք վտտ ենք ապրում քան թէ երկրում: Որ մեզ նե-ղացնող չը լինի, որ հարկերը, պարտքերը չըլինին, ծաւ, մեր երկրի բանջարեղէնը հերիք չէ որ մեզ կերակրի սող տարին...

— Ապա հարկեր, ասաց պարտքեր...

— Հէնց այդ է որ մեզ տունաւեր է արել ու այս շան աշխատանքի մէջ ձգել:

— Ապա մեզ հասած նեղութիւնները ամեն կողմից, շարունակեց Մկոն—էլ շուն մնաց որ մեր ոտքից չը բռնէր. հասնողը խփում է, հասնողը խփում, հասնողը կծում է... Է՛հ, Ակո, Ակո, զեռ երեխայ ես...

— Հատկաւոր լինելու պէտք չը կայ գրտնք գիտնալու համար, առարկեց Ակոն խուլ ձայ-նով—մենք ծնունդ ենք, այդ բաներն էլ մեզ հետ:

— Էդ մէկը ճիշտ է... Էդ մէկը լաւ ասացիր. բայց որ երկիր լինէինք, գոնէ այս սև թուր կուլ չէինք տալ... Զիգէրս դաղեց, ներսս ա-րին չը մնաց... որ մեր երկիր լինէինք, այս, բանջար կուտէինք, բայց այս շան կիանը չէինք ունենալ...

— Լռեցին: Ցածում միւսները ճաշել էին և պարզուկ վագոնների հովանու տակ՝ քնելու համար: Ամեն ինչ լուռ էր համարեա:

— Իմ ասածն էլ հէնց այդ է, յարեց Ակոն—ինչ լաւ կը լինէր որ շողեռաւ մեզ էլ տա-նէր... ասաց որ Տրապիզոն մտնելու է... ե-րանի նրան...

Մկոն չը պատասխանեց, արեց բերանն ու վեր կացաւ:

— Ժողովի հայը... ևս ուզում եմ քիչ քը-նել, ջարդուած եմ...

Ասաց ու պարզեց պատի վրայ: Լայն պատ էր. մէջքը դարձրեց արևին, երեսը գլպի ծո-վը:

Ակոն հացը հաւաքեց, քիչ հեռու գնաց ու ինքն էլ պարզուեց: Լսվում էին միայն, ծովի հանած շշուկը, շողեռաւի գողալը և հեռու անտառային լեռներից ու ձորերից, ճահիճնե-րի մէջ կռկռացող վորտերի ձայներից կազ-մուած խուլ աղմուկների միութիւնը, որ գա-լիս շնչալով անցնում էր գէպի անհունու-թիւնը: Բնութեան շշուկն էր այդ, անորոշ, բայց օլը լցնող շշուկ:

Մկոն ծովն էր դիտում, աչքը անհունու-թեան ուղղած, աշխատում էր տեսնելու հե-ռու, շատ հեռու:

Եւ նա տեսնում էր: Տեսնում էր այնտեղ—ծովերի, սարերի ու ձորերի ետեւում, շատ, շատ հեռու, մի սքանչելի դաշտի վրայ իր գիւղը, որի հօրիզոնն էր Տօրոսի լեռները, չըջապան էր Մշոյ ծաղկաւետ ու գեղածի-ծաղ դաշտը իր զղզղուն զեփեռով, ճվլան թռչուններով, պարզ ականակիտ վտակներով: Նրանք ողորտկում, հոսում էին ամեն կողմից, փայլում արծաթի պէս, շողողում արևի տակ, միմեանց կտրում օձի պէս, համբուրում զըզ-վում գիներբուկների և շուշանների ստորոտ-ներ, կեանք տալիս բազմազան բանջարեղէ-նների: Սխտորուկն ու սպիտակ բանջար, եր-ինջն ու մանդակ, բողիկն ու աւելուկ, կովու ճակտիկն ու սերեղ՝ բուսած էին, շուշանի, կակաչի ու մեղրածուկի, մեռածածաղիկի ու վետիկի վարդի սնուհաճութիւնների մէջ...

Եւ ծածանվում օրորվում էր կանաչ տրտե-րի ամրողջ տարածութիւնը, բոսին սուրում կուցնում էր նրանց պարարտ գլուխները... մարգագետնի, մալահասակ խոտերի մէջ ա-րածում էին պարարտ կովեր, դմակալից սշխարներ, թռչկոտում էին կայտառ այծեր, միմեանց գլուխ բռնում ուլերն ու գառնուկ-ներ... հովիւն իր թաղիքի հետ փուռել էր խոտերի մէջ, հօտը շներին պահ տուել, ինքը գլուխը անուշահոտ ծաղիկների վրայ դրել, քթածակերը օդի բուրման տուել, զեփեռից հովահրած՝ բնել էր բարձրահասակ խոտերի հովանու մէջ...

ծում, դանդաղ, անշարժ վեր է ընկել, իսկ երբ դործում է, ձայն է հանում, նա իր ձայնը բարձրացնում է յօգուտ ապիկարների և կրթական շառլատանների, երբ գործում է—փող է հաւաքում վարդապետների սենեակները խալիներով զարգարելու համար և երբ հաւաքվում է—անմիտ կռիւներ ու սնոտի լիմալուծիւններով է զբաղվում ու «աջղի» համար գանազան լուս հաստատութիւնների վնասում:

Իսկ նրա քթից բռնում է և նրա անունով տխմարութիւնների պաշտպանում ամեն մի փողոցից անցնող պրիկաշիկ կամ դերասանուհի, խմեցնելով մի գաւաթ թէյ և կամ տալով մի խրնջոյք...

Որքան անպատեհներ գործունէութիւն է այս: Աւելի լաւ չէ բոլորովին չը գործել, քան թէ ապիկար քահանաների, խաբեբայ վարժապետ և վարժուհու պաշտպանել. աւելի լաւ չէ փող հաւաքելու չը ձեռնարկել: քան թէ դռնէ դուռ ընկնել և սեւազլուխների համար գումարներ ժողովել. աւելի լաւ չէ վերջապէս նիստեր չունենալ, քան աջղի և մի լաւ հաստատութեան վրնասելու համար գումարել և ծիծաղելի կուրիոզներ մատակարարել:

Զէ որ այդպիսով ընկնում է լիովին իրենց ձայնի կարեւորութիւնն ու նշանակութիւնը: Ել ո՞վ ուրեմն կը հաւատայ այդ ձայնի ճշտութեանը—որքան որ նա 20—30 և կամ հարիւրաւոր կանանց բերնից դուրս գար, երբ մի թէյ կամ մի խնջոյք բաւական է որ նրանք համաձայնեն իրենց անունը գնելու:

....Մնտեղ էլ կէսօր էր. արեւ ասար. հոտաղները վերադառնում էին, մանուկները ստաբորիկ վաղվում աղբիւրից տուն. կանայք զոյնզոյն հագուստներով անբից էլ ու մուտ անում. խրճիթների կրթիկներից անօտը, համարեայ աննշմարելի ծուխ բարձրանում, կերակուրների հոտը սփռուկ է ամեն կողմ... Պարտէզի մի ծառի տակ, Մարիամը ահա փռել է սփռոցը կանաչ խոտերի վրայ. Գրեթէ ամբողջ օրը խոտաշոր ծաղիկների մէջ, վճիտ առուակը հոսում անցնում է նրանց կողքից և եղբայրների շուշաններն ու նարդիկները օրորվում են փոքրիկ քամուց, որ շարժում է նաև ծառի ճիւղերը և նստողների գլխին է սփռում ծաղիկների վերջին սպիտակ թերթիկները:

Ամառնամուտ է, Մշոյ սքանչելի, դրախտային ամառնամուտը. որպէս երգում են ծիծեռնակն ու գեղձանիկը, արտայնում ու սարեկը. ինչպէս օլը լիքն է անբաւ ծաղիկներից զոյացած անուշահոտութեամբ. հոտ է արտադրում նոյն իսկ խոտն ու ծառ, նոյն իսկ ջուրն ու հողը, ամեն ինչ բուրում է, անուշ բուրում...

Եւ այդ բոլորի մէջ նա նստել է, մէջքը ծառին կրթնեցրած. Գարօն ու Ռիօն կնդոտտ ձեռներով ու երեսով, հողաթաթախ ոտներով ու մազերով, բայց ուրախ դուռը ձիւներով մօտ են վազում, հայրիկի մօտը ի հետ խաղում, ծնկները վրա նստում, Գարօն իր ցեխից շինած տունն է ուզում ցոյց տալ հայրիկին, Ռիօն ուզում է իր ցանքիս—փոքրիկ մարգի մասին պատմել... իսկ Մարիամը, իր

խաբեբաներ պաշտպանող թղթերի տակ և երբ ոչ մի յորդոր ընդունակ չէ դըրտելու նրանց գէպի մի լաւ գործ—որպէսին է օրնորգաց գալոցի նիւթականի ապահովութիւնը, հոգալը կամ նրան փակ պահելու դէմ բողոքելը, որպիսին է մեր հեռու տառապող եղբայրների համար մի քանի կոպէկ ժողովելը և նրանց ցաւերը գոնէ մի չնչին բանով ամսքելու ձգտումը...

Միթէ պարսկահայ կնոջ ձայնը պիտի դուրս գայ միմիայն, անձնական կրքեր լագեցնելու և առաջ մղելու կամ զանազան աֆերիստների պաշտպանելու գործում...
Վ.Վ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՈՅԻՑ

Ինչպէս Պարսկաստանի միւս քաղաքների հայ տարրը, այնպէս և խոյեցիները աչքի են ընկնում իրանց տգիտութեամբ, փոփոխամտութեամբ երկչոտ և սարկացած բնավորութեամբ—սա դառն ճշմարտութիւն է:

Դա մասամբ արդարացնում է իրանց թւի սակաւութիւնը, այնուամենայնիւ նրանց այդ աստիճանի անշարժութիւնը և անտարբերութիւնը դէպի ներկայ դարուս լուսամիտ պահանջները, դէպի հասարակական խնդիրները դատապարտելի է:

Այստեղ մեզանում կենդանութեան նշոյլ չը կայ. մեռելութեան հոտ է փչում. շատ քիչ բացառութեամբ, բոլորն էլ բուսական կեանք են վարում, ամեն

կինը, առողջ կարմիր թշերով, անկեղծ ժպիտ դէմքին մօտենում է իրեն, համբուրում... և դնում է նրա առջև մեծ տախտակայ կուշի մէջ ածած «Թանը», երեսին՝ նարդիկ ու կապոյտ ծաղիկների թերթիկներով խառն անուշ սոխառածը փռած: Վանայ ձուկը իր անուշ հոտով լայնացնում է նրա ուռնգերը. սոսի ու դինձ, սամիտ ու կոտիմ, բողի սւ կանա, դիդացած են սփռոցի վրայ մի մեծ կտոր բանջարով պանիրի կողքին: Նա կտրում է հացը, երեսը խաշակնքում, ուտում է թանից, ճաշակում ձկնից, ձեռքի ափով առուակից ջուր վերցնում, պապակած կոկորդը թըրջում... որպիսի անուշահոտ ջուր, օ, որքան քաղցր է նա, որքան սառ ու զովացուցիչ... խմում է նա. խմում անյապօրթեամբ, որովհետև ծառա էր, շատ ծառա...

Ջարթնեց ու բարձրացաւ. սև ձեռքով սև ճակատը սրբեց, ծովի անհունութիւնը դիտեց, պառկեց ու նորից փակեց աչքեր:

Նորից երկրումն է, իր գիւղում: «...Յանկարծ աղմուկը ընկնում է գիւղը. նա ցած է ձգում գտալը. Մարիամը գունաթափուած վեր թռնում, աղայքը կաշում են մօր փեշերին: Ի՞նչ կայ, ի՞նչ էր եղել: Ոչինչ, հարկահանը գիւղ էր մտնում, հարկահանն էր, եկել էր տուրք ժողովելու...»

Է՛հ, այնուհետև էլ ի՞նչ կեանք. էլ ի՞նչացու այն սիրուն բնութիւնը, կշկշացող դրախտային առուակները, էլ ինչո՞ւ այդքան սքանչելի և անուշաբոյր ծաղիկներ, էլ ինչո՞ւ զովքա մին, պարարտ արտեր, գէր տաւար, լեցուն արտեր... էլ ինչո՞ւ կին, որդիք. չէ որ այդ

մարդ տարում է իրան համար, ձգտում է միայն իրան գոյութիւնը պահպանել:

Տեղացիները՝ գլխաւորապէս տրհետաւորներ լինելով, իրանից բոլոր ուժերը նւիրել են նրան և արհեստից դուրս թշնջ չեն ճանաչում: Տնտեսական սուղ պատճառներից ստիպւած, ասիւլը օրեր առանց հանգստութեան չարչարելուց և ֆիզիքապէս լոգնելուց լեռնոլ բնականապէս պիտի հանգստանան գիշերները: Այսպիսով ազատ ժամանակ շատ քիչ ունին, այն էլ կիւրակ՝ օրերը թէև զանցառութիւններ լինում են հաւաքակ արհեստաւորների ընդունված սովորութիւնների: Ինչպէս ամեն սեղ նոյնպէս և այստեղ արհեստաւորները կիւրակէ և տօն օրերը անցեն կացնում կեր ու խումով: Ի դէպ է յիշել որ տարածւած ախտերից մէկը օլու անկանոն և չափազանց գործածութիւնն է: Ամենապարտաւելին նա է. որ հակառակ կառավարութեան խիստ միջոցների տեղացիներից մեծ մասը իրանց տըները մի տեսակ գինետուն են դարձրել և անխտիր իրանց պատրաստած օղին վաճառում են իւրաքանչիւր խնդրողի. սա կորստաբեր երևոյթ է. սորանով կարելի է չափել մեր ժողովրդի կամ հասարակութեան բարոյականութեան չափը: Անտանեկան կեանքը թէև հարեմական, կաշկանդուած և փակ է, բայց պահել է իր հայկական սովորութիւնները իր բոլոր առանցնայականութիւններով: Այստեղ մենք տեսնում ենք այն բոլորը ինչ որ կարելի է մի հայկական լեռ ընկած գիւղում, որի հիման վերայ արժան չէ նոյնիսկ քաղաքանունը կրելու:

բոլորը վերցնում, տալիանում, կոխտում, պղծում ու քանդում են հարկահաններ ու վարդապետներ, վաշխառուներ ու քիւրդեր, տուրք առնողներ և աղաներ...

Էլ ի՞նչու, ի՞նչու բնութեան այդ բոլոր պերճութիւնը, երբ վաղեղների տնայկսիներն են, որոնք ոչ աշխատում են, ոչ գործում և ոչ էլ նրա յարգը գիտեն և զալիս յափշտակում են, պղծում ու աւերում...

Էլ ի՞նչու պարտէղ մշակել, երբ նրա արդիւնքը հարկահանի կողորդն է անցնում. ի՞նչու արտը ցանել, երբ նրա ցորենը շահնայի գըրպանն է ուռնցնում. ի՞նչու մարգագետինը խըրամել, երբ նրա խոտը բահրայի տուրք ծողովողն է կլանում, իսկ նրանով պարարտացող կովն ու ոչխարը քիւրտի խնջոյքին ծառայում: Ի՞նչու ուրեմն տուն ու տեղ չինել երբ նրանք մի խումբ կանոնաւոր կամ անկանոն աւազակների հաճութիւնը լուսաւորելու համար վառվելու են: Ի՞նչու խոտի դէպ, ի՞նչու մարագ... ի՞նչու մի խօսքով աշխատել ու տրեխել, երբ ոչ աշխատանքից մաս ունենա և ոչ էլ քրտինքիդ տէրն ես... ի՞նչու ուրեմն աշխատել, ի՞նչու...

Էլ ի՞նչն է կապում իրեն այդ «քանչիլի» բնութեան, այդ դրախտային երկրի հետ: Հոգը—չէ որ նա նրա արդիւնքի աչքը չէ տանը—չէ որ չեն թողնում կանգուն պահելու, օջախը—չէ որ բոլորի կրակը մարեցրին. տաւարը—չէ որ ոչ նրանց կաթն էր իր բերանը մտնում և ոչ էլ կարողանում է իր խնամքների արգիւնքը ինքը վայելել. եկեղեցին—մնաց մի եկեղեցի որ չը պղծուէր... ի՞նչ ուրեմն—կինը, որդի-

Տեղոյս հասարակութիւնը կեդրոնացած լինելով Դ. թագերում բնաւորութեամբ նոյնիսկ տարբերում են: Առաջին Բ. թագերի բնակիչները աչքին է ընկնում իրանց հեգ, աշխատակէր և քիչ շատ հետաքրքրուող բնաւորութեամբ, իրանց ամբողջ օրերը անց են կացնում աղմուկներով և պոռոտախօսութիւններով, որը յատուկ է կիտալոյրենի ցեղերին:

Ահա այստեղից առաջացել է թաղական կռիւը, որը միմիայն գէտ լարուցել է փոխադարձ ատելութիւն, որը շատ ցաւալի և անպատեհներ է բոլորի համար, ցանկալի է վերջ գնել այս խռովութիւններին միմիայն մէջ սէր հաստատելով:

Այս բոլորից կարելի է եզրակացնել մեր խոյեցիների գիւղութեան չափը, այս կողմից տեղոյս հասարակութիւնը շատ խղճալի է, ներկայ դարուս լուսաւորութիւնը այստեղ ներս չի թափանցել, լողում են տգիտութեան խոր խաւարի մէջ, հասարակական և քաղաքական աւերայ հարցերով չհետաքրքրւելուց զատ աւելորդ են հաճարում և հակառակ են բարեփոխութիւնների, ներկայ վիճակը գերազանց համարելով խօսքներս մասնաւորելով կ'գտնենք ազնիւ ուրտ և բարի հոգի ունեցող մարդիկ, որոնք տեսնելով իրանց հայրենակիցների կորստաբեր ճանապարհը, աշխատում են լեռ կանգնեցնել և նրանց ցաւերին դարման տալ: Աւելորդ է յիշել տեղոյս քահանաների տնունը, որոնք իրանց տգիտութեամբ և փառապիկութեամբ լարգանքի փոխանւրդ...

Ինչպէս իմանայ որ մինչև այժմ իր կրնոջ չեն բռնաբարել, չեն առեւտրել և որդոց պոլիները չեն ջախջախել քարերի խփելով...

Ի՞նչն է կապում նրան իր երկրի հետ ուրեմն... ինքն էլ չը գիտէ. մի բան քաշում է նրան այնտեղ, թէկուզ ոչ մի սեփականութիւն էլ չունենալ, թէկուզ իր գլխին կանգնած խփիլն ու ձեռքից առնէին իր իւրաքանչիւր բազէի աշխատանքը, բայց նա կուգէր իր հայրենի երկրի տակ գտնուել, իր դաշտի ջուրը խմել, իր պարտէղի ծաղիկները հոտոտել, իր լեռների խոտերով կերակուրել և իր կնոջ, ու որդիների հետ տանջուել... այո՛, գնալ, դնալ այնտեղ, գնալ իր հողի վրայ տանջուել... իր երկրի մէջ շնչել, այնտեղ մեռնել, այնտեղ... Վերկացաւ նորից. քնել չէր յաջողում նրան. քրտինքը ծորում էր, ծորում և նա աչքը ծովին յառած, ալիքներն էր դիտում այժմ էլ:

—«Տանջուել... այո՛, ի հարկէ այնտեղ տանջուել կայ. բայց միթէ այստեղ քիչ է տանջվում: Սև փոշու մէջ, իշու պէս կրում է ու կրում, կէսօրին տաք արևի տակ մի կտոր ցամաք հաց զօռով մղում անցկացնում իր շոր կոկորդից գէպի վար, երեկոյան մի փոքրիկ աման կեղտոտ ու անհամ կերակուր ուտում Դահլիշի Մարգարի մօտ, յետոյ պառկում մի հոտած միջնորդի մէջ, հիւանդութիւն ու աղոտ շնչում... աշխատածը ինչ է. մի քիչ փող. դըրանով ոչ միայն իր վեց ամիս կրած հիւանդութեան ժամանակուայ պարտքը պէտք էր վճարել, այլ և ուղարկել երկիր վաշխառուին, հարկերին, ընտանիքին... տանջուել, այո՛, կը նոյն ու որդոց կորստի քաշել... ի՞նչ էր շահի

աղաների յամառ. կամքը, որ ուզում են անսպասառ իրենց ասածն անել, չուսով կ'հեռանայ, զգուշի է ի հարկէ, շատ ու քիչ հասկացող մարդը երբէք չէ կարող փխած գլուխներ տէր աղաների հետ գործել:

Դավրէժի վարժարանների վիճակախաղը ամեն տարի մայիս ամսում դուրս էր գալիս. ինչ պատահեց այս տարի, որ այդքան ուշանում է. մանաւանդ որ այս տարի ամենից շուտ տոմսակները սպառուկ են. չը լինի թէ Բերդաթախաղի հոգաբարձութեան գործի մասնակցելովըն է որ այդքան գործը ձգձգուում է: Զանազան տեղերից մեզ այդ մասին դիմումներ են անում, բայց ինչ կարող ենք պատասխանել եթէ մենք ինքներս էլ ոչինչ չը գիտենք:

Շնորհակալութեամբ ստացանք Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնից հետեւեալ գրքերը: 1) «Աւրբի-նայի Մանուկը», 2) «Գօշկալարը Երա-ժիշտ», 3) «Խնձորների Երկրում» և 4) «Երկու Եղբայր»: Վերոյիշեալ գրքերը և ընկերութեան բոլոր հրատարակած գրքերը Պարսկաստանում կարելի է ստանալ պ. Ալեքսան Զոլսէֆեանի մօտ Ռաշտում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՆԻԹԻՒՆ

Յարգելի խմբագիր! որովհետեւ ձեր լրագիրը հրատարակվում է շաբաթը միայն մի անգամ, ուստի ես կարծում եմ, որ նրա թղթակցութիւնները պիտի լինեն կարճ և ամփոփ, առանց աւելորդ երկարաբանութեան: Այլիլի սկզբից Աստրախանի թեմի կառավարիչ նշանակեց սրբ. Խորէն եպիսկոպոսը երեքշաբաթից աւելի Վեհափառի հրամանով Մոզդուկ գնաց, տեղական մի քանի գործեր կարգի բերելու. մնացած ժամանակը նա անց է կացրել քաղաքում և ցոյց է տուել հետեւեալ անօրինակ գործունէութիւն:

Առաջին—վճուել է թեմական զբաղող բաց անել Աստրախանում և այս վճիռը կայացել է թեմի զանազան քաղաքներից հրաւիրած պատգամաւորների ձեռքով: Աստրախանի հետ զբեթէ հաւասար մրցակից էր Արմաւիր քաղաքը, բայց վճուեց բաց անել Աստրախանում 11½ ձայնի առաւելութեամբ ընդդէմ 9—10-ի (մի ձայն մինչև այժմ անորոշ է մնում): Թեմական գալրանոցը պէտք է և անշուշտ հարկաւոր է բաց անել Աստրախանում թէ զրամական և թէ մանաւանդ կրթութեան և հասարակական բարձր տեսակետից, զգում եմ, որ վերջին տեսակետը բացատրութեան կարօտ է, բայց միևնոյն ժամանակ յուսով եմ, որ «Շաւի» նամակի բերթերոյին շատ դժուար չի լինի առանց բացատրութեան էլ զգալ բանի էութիւնը: Երկրորդ—յառաջ բերեց և հասարակական ժողովում վճուեց եկեղեցական և գալրոցական գումարները

մօտ 200,000 (քաջի անձեռնմխելի գումարներից) անշարժ կալուածների վերածել, որոնք անհամեմատ աւելի արդիւնք կրերեն, քան թէ տէրութեան բաժնեւորում:

Երրորդ. քահանայական բազմաշարժար հարցը ամենահիշատիկ լուծումն ստացուեց, փոխանակունէ—տուն խանութ—խանութ խնամիական ստորագրութիւններ հաւաքելու, քահանայի արժանաւորութիւնը վճուում է հասարակական ժողովը, հիմք ընդունելով քահանայութեան համար սահմանւած կրթական ցենզը (ճեմարանական կամ սինիարական): Այս սխառմով արդէն մի երկու հարց իրենց ցանկալի լուծումն ստացաւ:

Չարորդ, աչքի առաջ ունենալով օրիորդական դպրոցի նեղ և անլարմար շինութիւնից, վճուեց և անմիջապէս (Խորէն Սրբազանի գործունէութեան ամենաորոշ ձևը), ձեռնարկեց վերանորոգել շինութիւնը 11 հազար ռուբլու նախահաշուով:

Հինգերորդ. վճուեց թեմի անցեցող ուսուցիչների համար ամառուայ կուրսեր բաց անել, հրաւիրել նրանց և ամենայն յարմարութիւններ տալով, պատրաստել ցենզ ձեռք բերելու:

Վեցերորդ. քահանաների և ուսուցիչների համար ընթերցարան բացեց, որ կարող է ծառայել իբրեւ հիմք սովորալ թեմական գրադարանի:

Եօթներորդ. անդադար լսվում են հասարակական և բարոյական—կրօնական բովանդակութեամբ քաղաքներ, քաղաքներ որոնք կարող կլինէին գոհացում տալ նոյն իսկ եւրոպական սրէ ամենաընտիր հասարակութեան և որոնք կարող էին պատիւ բերել նոյն իսկ եւրոպական ամէն լուսամտի հոգեորականի: Եւ այլն և այլն:

Սրբազանի տենդային գործունէութեան մի օրինակ կարող է լինել թեմական դպրանոց բանալու պատգամաւորական ժողովներից միւրը, որ տեւեց առաւօտեան ժամի 10-ից մինչև երեկոյան ժամի 9-ը:

Աստրախանի հասարակութիւնը հէնց սկզբից մի բազմաստորագիր (200-ից աւելի) խնդիրքով դիմեց Վեհափառին, որ Գ. Խորէն սրբազանը առաջարկէ պաշտօնական հաստատութեան:

Ինչ ասել կուզի, որ հասարակութիւնը բարոյապէս լարուած է:

Երօ

Աստրախան, 10 յունիս 95

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

ՌԵՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօֆիա. 20 յուլիս. 3 մարդ ձերբակալու են և ամբաստանվում են Ստամբուլի սպանութեամբ:

Կ. Պոլիս. 20 յուլիս. Բ. Դուռը տեղեկութիւն տուեց այստեղի ղեկավարներին որ ասիական տաճկաստանում եղած նահանգների բարենորոգութեան ծրագիրը շուտով կը ներկայացուի նրանց:

Ս. Պետերբուրգ. 20 յուլիս. Կայսրը այսօր ընդունեց բոլորական ղեկավար

նութիւնը և ասեց որ նա չը պիտի մերժէ պաշտպանել բոլորացիները ապագայում:

Սօֆիա. 20 յուլիս. Այսօր տեղի ունեցաւ Ստամբուլի թագման հանդէսը որը մի շատ խառնակ տեսարան էր ներկայացնում:

Հոռմ. 21 յուլիս. Երկու իստական ղոգենաւեր ընդհարու են Սպէշեաի ծոցումը, 145 ճանապարհորդներ և 3 նաւատորներ զոհ են գնացել այդ աղետին:

Կ. Պոլիս. 22 յուլիս Բ. Դուռը Շաքիր փաշային նշանակել է Հայաստանի համար առաջարկւած բարենորոգումների գործին վերատեսուչ լինել:

Լանդոն. 22 յուլիս. Ռոզերին յայտնել է տաճկաց ղեկավար Ռուստեմ փաշային, որ անգլիական քաղաքականութիւնը, հայկական խնդրի նկատմամբ անփոփոխ կը մնայ:

Փարիզ 23 յուլիս. Ֆրանսիացիք մեծ նեղութիւնների են հանդիպում Մադակասկարում. հիւանդութեան պատճառով ուր աւելանում է նրանց զոհերի մէջ և հաղորդակցութեան դժուարութեան համար: Ֆրանսիական թերթերը զանգատվում են որ այդ արշաւանքը սկզբից վատ կազմակերպութիւն ունէր: —Խէզբիվ Եգիպտոս վերադառնալուց, կայցելէ Սգեստան և Խրմը:

ՇԱՒԻՂԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Թիֆլիսից-Լոնդոն: Մեր գլխաւոր աշխատակցին: Ձեր նամակների մէջ շատ էք լուզում, չէր արժի. չէ որ ձեզ յայտնի է թէ «Արձադանքում» պաշտպանւած անձնաւորութիւնը ինչ կարգի մարդ պիտի լինի:

Դավրէժ. Ե. Ստացանք ձեր հերքումը կաշխատենք ստուգել. բայց կարծում ենք որ սխալ էք ձեր մտանցոյց արած անձնաւորութեան վրայ:

Թիֆլիս և Մարսէյլ. «Տարապին» և «Արմէնիան». Այլ ևս չենք ստանում ձեզ, ինչ է պատահեց ձեր հետ:

Արտօնատէր—Հրատարակիչ
ԱՆԴՐԵԱՍ ԲԵԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Ե ԾԱԽԻՈՒՄ Ե ԻՄԲԱ-

ԳՐՈՒԹԵԱՆՍ ՄԵՋ

ՄԻՐՋԱ ԻՍԿԵԱՆԴԱՐ

(Պարսկական զրոյց)

Գ Ր Ք Ո Յ Կ Ը

Գինն է 50 կոպ. կամ 3 զուան

3—4

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Ե ԿԱՃԱՎՈՒՄ Ե

„ԳՐՈՒ ԸՆՏԱՆԻՔԻ“

Պ Ե Պ

ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ԼՈՒՄԱՅԻ

Գինն է 60 կոպէկ

Դիմել այս հասցեով՝ Тифлисъ, Типография Главнаго начальства, С. К. Назарянцу.

Թիֆլիսում վաճառվում է նաև Կ. Գրեգորեանցի Կովսեան գրավաճառանոցներում:

2—10

ՓՈՐԱՃՃՈՒԻ (որկուզում է ժապոնական որդ) (Solitaire Tenia) ԴԻ

ԻՆՍՏ ԱԶԴՈՒ ԴԵՂ

Փորձած «Շաւի» խմբագրութիւն

և գորութիւնը երաշխաւորած: Դեղը

—4 ժամայ ընթացքում 2ԳՈՒՄ

ձձՈՒԻ ԳԼՈՒԻԸ և լիովին ազատում

րանից: Ոչ մի լեղիութիւն չունի. հ

կաւոր չէ ոչ լուծողական և ոչ էլ

մապահութիւն: Հարկաւոր եղած պ

ւերները գրաւոր կերպով կուղարկ

զեղի հետ: Դեղը փոշի է: Գինն է Մ

թուման (2 ռուբլի): Դիմել Թէհրան

Մահաբէ Յորդանան Եղեազարեանց

Téhéran (Perse) M. Hordanan E

zarian: Պատուէրները կատարվում

անմիջապէս և խնամքով:

3—5

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Դ Պ Պ Դ Ի

„ԻՆՍՏԱՆԻ ՄԵԼԻՔՈՒ“

ԹԻՒՆՆԵՐԸ

Բ. ՏԻՊ

Գինն է 1 ռ. 75 կ: ձանապարհած

սով 2 ռ.:

Դիմել՝ Тифлисъ. Аннѣ Раффаѣ

3—10

ՀԱՐԻՐԱՄԵԱՅ

ՀԱՅ

ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻՑ

Ծախվում են խմբագրութեան մէջ

Գինն է Թէհրանում վեց զուան

Պարսկաստանի օտար քաղաքների

մար 8 զուան:

8—10